

РЕДАКЦИОННАЯ

Պատմությունը հիշողություն է և հզոր զենք մերօրյա մարտահրավերներին դիմակայելու համար

Սարգսյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ) sargsyansuren@yandex.ru

EDN: BCDHMD

Մերօրյա Հայաստանում հասել ենք մի հանգրվանի, որ երբեմն գոյատևման այս անգիջում պայքարի ու մարդկանց հարատև վազքի մեջ իր գոյությունը պահելու համար մարդու կենդանական չարությունից և արյունոտ աչքերով՝ շահից բացի ուրիշ ոչինչ չտեսնելուց, անասելի հոգնում ես ու տառապում: Միակ սփոփանքը մնում է պատմությունը, որը մեր հիշողությունն է, ազգապահպան հզոր զենքը: Ազգերը, երբ կորցնում են պատմական հիշողությունը, հաղթանակը՝ արդարի, և հավատը՝ հաղթանակի նկատմամբ, մեռնում են: Պետք է լավ իմանանք պատմությունը, ճանաչենք հայրենիքը, հայ ժողովրդի ոգին, հարգենք նախնիների հիշատակը, նրա երեկն ու այսօրը, ովքեր հաղթանակներ են բերել մեր երկրին: Վերջապես պիտի սիրենք ու ճանաչենք նաև մեր հոգևոր հայրենիքը, նրա պատմական հիշողությունը: Միաժամանակ այսօր յուրաքանչյուրի մեջ պետք է շիկանա հայրենիքը փրկելու այն գերմարդկային ճիգը, այն գերագույն իմաստությունը, առանց որի հնարավոր չէ շահել ոչ պատերազմ, ոչ ապրելու իրավունք:

Բանաստեղծ Գևորգ Էմինն ասում էր, որ հայրենիքը մեր ժողովրդի պատմության հին ու նոր դարն է, մեր հողն ու քարը, ջուրն ու հուրը, գիրն ու երգը, որոնք այսօր, վերածնված ու լեզու առած, պատմում իրենց մասին: Ու քանի որ աշխարհը շատ խառն է, այն վերաբաժանելու և նոր համակարգ ձևավորելու անգիջում պայքար է ընթանում, մեզ՝ փոքր ու տառապած ժողովրդին, այդ իրադարձությունները մեկնաբանելիս հարկավոր է զգույշ, շրջահայաց և անկողմնակալ դիրքորոշում դրսևորել: Մեր վտանգված հայրենիքը իրավունք չունենք այլևս նոր փորձությունների տանելու: Ոչ մի հակաքաղաքականություն, այս պահին մեր ապագան մեր չեզոքության մեջ է: Իսկ իշխանության կողմնակիցները՝ իբր այդ գաղափարների կրողի և պաշտպանի, անընդհատ ամպագորգոռ տոնով ու անզգույշ կեցվացքով խոսում են պետականության և անկախության մասին: Նրանք կամ չգիտեն կամ մոռանում են, որ պատմության մեջ եղել են նաև հայոց որոշ անբարո թագավորներ, որոնք հենց իրենք են ծախել իրենց երկիրը (Հովհաննես-Սմբատ, Սենեքերիմ): Ասել է թե իշխանավոր լինելը դեռևս հայրենասեր լինելու գրավականը չի:

Այդ ամենի ժամանակակիցն են և հիշում են, որ ժամանակին, երբ Վանո Սիրադեղյանը ելույթներ էր ունենում Պատմական ու Իրական Հայաստանների թեմաներով, այդ ամենն ընկալվում էր որպես «առաջադեմ» մտավորականի հանդուգն մարտահրավեր: Դա, ըստ էության, անմեղ մի չարաճճիության էր, քանի որ թիկունքում Հայրենական Մեծ պատերազմ տեսած, «Վարդանանք» ու «Գևորգ Մարգալետունի» կարդացած առողջ և հայրենասեր հասարակությունն էր, իսկ Վանոյի թիմն էլ, ի վերջո, Արցախ էր ազատագրել ու պահել: Այժմ, սակայն, երբ վանոյական գիծը շարունակող ներկա իշխանությունները նույն ոճի մեջ են արտահայտվում Արցախի, ինչպես նաև Պատմական և Իրական Հայաստանների կապակցությամբ, ամեն ինչ արդեն ոչ այդքան ծիծաղելի է, ոչ էլ՝ անվտանգ, քանզի թիկունքում ապակողմնորոշված ու հիվանդ հասարակությունն է, իսկ Արցախն էլ չկա...: Եվ, եթե Վանոն ուղղակի իր համարձակությունն էր ցուցադրում, փորձելով ընդգծել սեփական մտածողության յուրօրինակությունն ու հասարակությանը դեմ դուրս եկող իր «արվեստագետի ազատ ոգին», ապա այժմ այս ամենն ուղղակի քայքայիչ ազդակներ է ուղղում դեպի առանց այդ էլ հիվանդ հասարակություն: Իմ պատկերացմամբ, սա շատ նման է մի իրավիճակի, երբ մի դեպքում լիովին առողջ մեկին փորձես ասել, թե նա քաղցկեղից կմահանա, իսկ հետո էլ նույն այդ կատակն անես իրոք քաղցկեղով հիվանդ անձնավորության նկատմամբ: Թեև ինձ համար դա էլ էր անընդունելի, բայց Վանոն գոնե տեղ ուներ նման չարաճճիություն անելու համար, իսկ ներկա պայմաններում, այդ ամենն ուղղակի անընդունելի է:

Այս առումով ցանկանում եմ տարակուսանքս և որոշ դիտարկումներ կատարել Ազգային ժողովում ՀՀ վարչապետի կարճ և հիմնադրույթներ պարունակող հայտնի ելույթի մասին. 1. «Պատմական Հայաստանը և Իրական Հայաստանը ոչ միայն համատեղելի չեն, այլև հաճախ հակոտնյա են միմյանց և նույնիսկ լրջագույն **սպառնալիքներ են ստեղծում մեկը մյուսի համար**», - ասաց վարչապետը: Իմ համեստ կարծիքով՝ իհարկե դա անհեթեթ, անիմաստ, իմաստագուրկ, անմիտ, բովանդակազուրկ տեսակետ է: Իրականում այս հասկացությունները ոչ մի կերպ չեն հատվում կամ ընդհարվում, ավելին, ճիշտ կիրառման դեպքում **մեկն ամեն կերպ օժանդակում է մյուսին**: Ուղղակի սա ասվեց՝ ի կատարում գործող ուժի այսօրվա կուրսի, որը որևէ կերպ

շահագրգռված չէ և փաստացի չի էլ խոսում ոչ Արցախից, ոչ Մեծ Եղեռնից, ոչ էլ պատմական այլ հարցից: 2. Որպես լրացում ասվածի և, իհարկե նաև մշտական ինքնարդարացման, արվեցին նաև քողարկված, բայց կոպիտ հակառուսական հայտարարություններ առ այն, որ Ռուսաստանը, սկսած 2021-ի սկզբից, արել է ամեն ինչ, որպեսզի զավթի Հայաստանի Հանրապետությունը՝ հեղաշրջում, զինված ներխուժում և այլն: Այս հետնախորքի վրա Արցախի անկումը ևս վերագրվեց Ռուսաստանին: Արդյունքում ստեղծվեց տպավորություն, թե, որոշակիորեն հիասթափված բրյուսելյան հանդիպումից կամ, գուցե, ձգտելով առավել հաճոյանալ Արևմուտքին, վարչապետն առավել սրեց հարձակումները Ռուսաստանի վրա՝ Բրյուսելում չհասած ինչ որ բանին գուցե գոնե այս գնով հասնելու համար: Ամեն դեպքում, պարզ է, որ Մոսկվային սա որևէ կերպ դուր չի գա և վնասներ կպատճառի Հայաստանին: 3. Եվ վերջապես, հին ու բարի «Արցախի բանակցային գործընթացը», երբ, փաստացի հենց իր իշխանության օրոք ունենալով Արցախի անկումն ու հայաթափումը, վարչապետը ձգտում էր և միշտ էլ կձգտի այնպես անել, որ հիմնավորի, թե. «Ամեն ինչ էն գլխից որոշված էր»: Մի բան, որն ակնհայտորեն իրականությանը չի համապատասխանում:

Հարկավոր է հասկանալ և բոլորիս համար մեկընդմիջտ ուղղորդիչ դարձնել այն, որ Հայաստանը հավերժական է, հետևաբար **չկա պատմական Հայաստան, կան պատմական սահմաններ**: Օրինակ 29.8 հազար քառ կմ ներկա պատմական շրջանի Հայաստանի Հանրապետության սահմաններն են, որը համապատասխանում է Հայաստանի սահմանների մի փոքր մասին: Որ Հայրենիքները պատմական չեն լինում, սահմաններն են լինում պատմական: Հետո էլ Հայրենիքը դա Պետությունը չէ և ոչ էլ Պետությունն է Հայրենիքը: Պետությունն էլ, Հայրենիքն էլ գերագույն արժեքներ են և չի կարելի դրանք արհեստական հակադրության մեջ դնել: Հարկավոր է իմանալ նաև, որ մոտ 160 հազ քառ կմ-ով Հայաստանի հանրապետության սահմանները որոշվել են Ազգերի Լիգայի զեկույց առաջարկով, Սևրի դաշնագրով, Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով: Որ Պատմական Հայաստանը, որը կազմված էր Մեծ Հայք, Փոքր Հայք, Միջերկրածովյան Հայք կամ Կիլիկիա, Հայոց Միջագետք, Կովկասյան Հայք շատ ավելի մեծ է: Որ Պատմական Հայաստանին պետք է ձգտել հասնել քայլ առ քայլ, իսկ Հայաստանի հանրապետության սահմանների վերականգման համար պետք է պայքարել այսօր և մոտակա տարիներին, որպեսզի կարողանանք Հայկական Լեռնաշխարհում ապրել և պետություն ունենալ: Պետք է միշտ հիշենք, որ ինչպես Ֆրանսիացի ականավոր լեզվաբան, հայագետ Անտուան Մեյեն էր գրում. «Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել երկու հազար տարվա ընթացքում, որքան հայ ազգը: Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել իր սեփական լեզուն: Հենց մի քանի հայեր համախմբվում են իրենց գաղթած քաղաքում, նրանք հիմնում են տպարան և իրենց լեզվով թերթ տպագրում: Այնքան մեծ է քաղաքակրթական լեզվի կենսունակությունը: Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ. այն ժամանակներում, երբ ֆրանսերեն լեզուն դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականություն: Այն ժամանակ, երբ կազմավորվել է հայ գրականությունը, ժամանակակից Եվրոպայի մեծ ազգերից ոչ մեկը դեռևս գոյություն չուներ. ո՛չ Ֆրանսիայի մասին խոսք կարող էր լինել, ո՛չ էլ Անգլիայի: Հայ ազգի գրական հեղինակություններն այնպիսի հնություն ունեն, որ շատ դարերով գերազանցում են Արևմտյան Եվրոպայի ազգերի մեծամասնության հեղինակություններին»:

Դարերի ընթացքում մենք գոյատևել ենք, քանզի միշտ ունեցել ու պահպանել ենք մեր Ազգային ինքնությունը, որը մեր օրերում ձգտում են ոչնչացնել: Իսկ փորձը ցույց է տալիս, որ ինքնությունը ոչնչացնել հնարավոր է նաև առանց միջուկային զենքի. բավական է իշխանությանը մոտ թողնել որակյալ կրթություն չստացածին և կեղծ դիպլոմավորված «մասնագետին»: Այդպիսի բժշկի ձեռքով է մահանում հիվանդը, դրամն այդպիսի տնտեսագետ-ֆինանսիստի ձեռքով է փոշիանում, իսկ արդարությունը «սպանվում» է այդպիսի իրավաբան դատավորի ձեռքով: Սակայն ամենավտանգավորը կրթական համակարգում այսօրյա խառնաշփոթն է, որը հավասարագոր է ազգային քառսի և ինքնաոչնչացման: Յուրաքանչյուր հայ պետք է այս հասկացողությամբ ապրի: Մթափ, խելացի և կիրթ մարդկանցով է ապահովվում պետություն ունենալու և կայանալու ճանապարհը: Հետևաբար՝ եկե՛ք պահպանենք մեր ինքնությունը և վերջ տանք համատարած սոփն ու կեղծիքին տուրք տալուց, որովհետև սուտն ու կեղծիքը կարող են կործանել երկիրը: Ի դեպ, դրանք Հայաստան մուտք գործեցին դեռ այն ժամանակ, երբ Հայաստանի իշխանությունները բառիս ամենաբուն իմաստով աճուրդի էին հանում մեծ ու փոքր պաշտոնները, շահագրգիռ և կողմնակալ ձևով չէին պատժում, շատ ժամանակ նաև հովանավորում էին այն կենդանիներին, ովքեր տարբեր մարդկանց մասին տարածում էին նույն այդ սուտն ու կեղծիքը: Արդյունքում, ունեցանք այն, ինչ այսօր ունենք:

Ավելին, հասանք այն հանգրվանին, որ կասկածի տակ է դրվում նույնիսկ Հայոց ցեղասպանության իրողությունը: Իսկ հայտնի է, որ ցեղասպանությունը գուտ շատ մարդկանց սպանություն չի, այլ գործողություն, որն ուղղված որոշակի խմբի ոչնչացմանը և կապ չունի, քանի մարդ է սպանվում այդ գործողության ընթացքում (Բոսնիական Սրբերինիցայի յոթ հազար

տղամարդու սպանությունը Արդարության միջազգային դատարանը որակել է որպես ցեղասպանություն): Իսկ մեր մերօրյա իշխանությունները ոչ ավել, ոչ պակաս հարցականի տակ են դնում մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը: Իսկապես շատ ճիշտ է ասված՝ Դե եկ վարդապետ ու մի խենթանա...

Այս ամենով հանդերձ, շատ են սիրում Երկիր մոլորակը և մարդկանց: Ակամա ուզում են ճշալ՝սթափվեք, մարդիկ, քանզի Աշխարհում ամեն տեսակ սիրո պակաս կա: Սիրեք միմյանց այս անսեր աշխարհում, պարզապես սիրեք իրար: Սիրեք բոլոր օրերին ու բոլոր օրերի փոխարեն: Սիրեք այսօրվա պես հանգիստ ու վաղվա պես սպասված սիրով: Սիրեք առանց սահմանների, դրանց փոփոխությունների ու սահմանափակումների: Սիրեք իրար առանց պատերազմների ու հետևանքների: Ուղղակի սիրեք իրար առանց պատճառների ու եթեների: Կյանքը կարճ է և անցողիկ...

Сдана / Հանձնվել է՝ 22.04.2024

Рецензирована / Գրախոսվել է՝ 26.04.2023

Принята / Ընդունվել է՝ 28.04.2023